Սալվարդ

Բնակչություն՝ 418

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 123 կմ,
Հեռավորությունը Սիսիան քաղաքից՝ 19 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1940 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ, լեռնային,

Հիմնադրել են 1828 թվականին Պարսկաստանից գաղթած հայերը: Սկզբնական շրջանում այն կոչվում էր Ալելու: Այնուհետև գյուղը վերանվանվել է Սալվարդ՝ համանուն սարի անունով: Սալվարդ անունը կապ ունի խուռիական Սալա (Շալա) աստծո անվան հետ:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Գյուղատնտեսությամբ զբաղվում է 92 գյուղացիական տնտեսություն:
Անասնագլխաքանակը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է.
- խոշոր եղջերավոր անասուններ՝ 500 գլուխ,
- մանր եղջերավոր անասուններ՝ 557գլուխ,
- խոզեր՝ 15 գլուխ,
- մեղվաընտանիքներ՝ 494:

Համայնքում 2011թ. կատարվել է հացահատիկային մշակաբույսերի 120 հա աշնանացան:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 4253 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 4065 հա, որից՝
- վարելահող՝ 565 հա, խոտհարք՝ 164 հա, արոտ՝ 2777 հա, այլ հողատեսք՝558 հա
- բնակավայրերի հողեր՝ 72 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝90 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 1հա,
- ջրային հողեր՝ 25 հա